ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.02.2018թ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2018/10

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2018թ. թիվ 03/26-3/626-18 գրությամբ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) 15.01.2018թ. թիվ 01/13.1/55-18 գրության հիման վրա, 16.01.2018թ. թիվ 03/26-3/626-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. **<u>«Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 25.01.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/1098-18 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն 30.01.2018թ. գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը բարեխղճորեն մասնակցել է գնումների գործընթացին և երբևէ չի խախտել գնումների գործընթացին մասնակցության համար սահմանված պահանջները: Նման իրավիճակն առաջացել է այն պարզ պատճառով, որ Ընկերության՝ գնումների գործընթացին մասնակցելու գործընթացով զբաղվող պատասխանատու անձը թյուրիմացաբար էլեկտրոնային հասցեի մուտք համակարգից հեռացրել է Ընկերությանն ուղղված նամակը, որի հետևանքով էլ չի տեղեկացվել պահանջվող տեխնիկական բնութագիրը ներկայացնելու պահանջի մասին:

Բացի այդ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է այն անձանց ցանկը, որոնք չունեն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք: Մասնավորապես, նույն հոդվածի, ի թիվս այլի, 6-րդ մասում նշում է այն անձանց, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը հայտնել է, որ ակնհայտ է այն հանգամանքը, որ Ընկերությունը չի խախտել Օրենքում նշված որևէ պահանջ: Ավելին՝ Ընկերությանը հնարավորություն չի տրվել շտկելու ստեղծված իրավիճակը և կատարելու անհրաժեշտ պահանջները:

Ընկերությունը նախկինում կանոնավոր և բարեխղճորեն մասնակցել է գնումների գործընթացին, հետևաբար տեխնիկական թյուրիմացության պատճառով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը նպատակահարմար չէ և Ընկերության համար չպետք է առաջացնի բացասական հետևանքներ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 30.01.2018թ. ժամը 12:10-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամը (այսուհետ՝ Պատվիրատու) 15.01.2018թ. թիվ 01/13.1/55-18 գրությամբ հայտնել է, որ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից 2017թ. դեկտեմբերի 15-ին հայտարարված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/2» ծածկագրով սննդամթերքի գնման ընթացակարգի շրջանակում տարբեր չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն, սակայն վերջինս սահմանված ժամկետում հրավերով նախատեսված փաստաթղթերը չի ներկայացրել:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 30.01.2018թ. ժամը 11:45-ի նիստերի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2018/10 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2018/10 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել:

2. «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Սույնով «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ապրանքային նշանը, արտադրողը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2017թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի 39-42-րդ չափաբաժինների մասով «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից, որին 25.12.2017թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է հրավերով սահմանված ժամկետում ներկայացնելու 6 և 6.1 հավելվածները:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.12.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետով արձանագրել է, որ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացրել 6 և 6.1 հավելվածները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.01.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ մերժել է «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի հայտը:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով << ֆինանսների նախարարության 16.01.2018թ. թիվ 03/26-3/626-18 գրությունը, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի 15.01.2018թ. թիվ 01/13.1/55-18 գրությունը՝ կից փաստաթղթերով և «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի 30.01.2018թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» << օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. ***խախտել է*** պայմանագրով նախատեսված կամ ***գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից*** պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: ***Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:***

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված

որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում ***փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը*** և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.13-րդ ենթակետի 4-րդ պարբերության համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով ***առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք***

աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը: Սույն ենթակետով սահմանված ժամկետում ապրանքի ամբողջական նկարագիրը ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 8.13-ից 8.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամի կողմից կազմակերպված «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/2» ծածկագրով ընթացակարգին հայտ ներկայացրած «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.12.2017թ. ժամը 09:30-ի որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը, առաջնորդվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջներով, 25.12.2017թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում ներկայացնել 6 և 6.1 հավելվածները:

«Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ընդհանրապես չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 09.01.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ մերժել է «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի հայտը, դադարեցնելով վերջինիս մասնակցությունը ընթացակարգին:

«Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն 30.01.2018թ. գրությամբ Խորհրդին հայտնել է, որ Ընկերությունը բարեխղճորեն մասնակցել է գնումների գործընթացին և երբևէ չի խախտել գնումների գործընթացին մասնակցության համար սահմանված պահանջները: Նման իրավիճակն առաջացել է այն պարզ պատճառով, որ Ընկերության՝ գնումների գործընթացին մասնակցելու գործընթացով զբաղվող պատասխանատու անձը թյուրիմացաբար էլեկտրոնային հասցեի մուտք համակարգից հեռացրել է Ընկերությանն ուղղված նամակը, որի հետևանքով էլ չի տեղեկացվել պահանջվող տեխնիկական բնութագիրը ներկայացնելու պահանջի մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Այսպիսով՝ Խորհուրդն արձանագրում է, որ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն, չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի հետևանքով «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ն «ՀԱՊՀ-ԳՀԱՊՁԲ-18/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, և որի հետևանքով «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ի հետագա մասնակցությունը նշված ընթացակարգին դադարեցվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2018թ. թիվ 03/26-3/626-18 գրությամբ «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01240868) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել և «Ապարանք Շանթ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ